միւս գետ, որ կոչի Սատապուս[1], որ ելանէ ի Կողովի լճէ եւ անկանի[2] ի Նեղոս, առ կղզ[ւ]ոյն[3]: 39 *Ունի եւ լերինս ութ[4]:* 40 *Ունի եւ փոքր աշխարհս երիս[5]՝ զԲարբարիա՝ առ Բարբարական ծոցովն, եւ զԱզոնիա, յորում լինին փե[ւ]ղք[6] բազմաշատք, եւ զՏռով[գլոդիտիկ]է[7]:* 41 *Ունի եւ* [15բ] *գաւառս ազգաց երեսուն եւ վեց[8], յորոց մինն կոչի Բաբելացիք եւ Արմատակերք, եւ մինն՝ Ոքսոմոնտացիք. յորում կա[յ] Թագաւորութիւն մեծ՝ հանդէպ Պռոնեա[յ] ծայրին, որ բաժանէ ընդ Ատողիտէ եւ ընդ Երջանիկն Արաբիա. զայս տեղ[ւ]ո[յ][9] ասել Թուի ի Յոբ.* Տեսէ՛ք զճանապարհս Թէմնաց[ւ]ոց[10]՝ որք ի շաւիղս Սաբայ հա[յ]իք[բ]: 42 *Կան եւ անդ Թզուկք եւ ազգն Զագակերք եւ Վրանաւորք, եւ ի միջին[11]՝ Եթէովպացիք:* 43 *Ունի եւ կղզիս յԱրաբաց[ւ]ոց[12] ծոցին քսան եւ ութն[13], եւ այլ կղզի, որ կոչի Մոգուց, եւ այլ՝ որ Հաւուց:* 44 *Ունի եւ զխնկաբեր[14] երկիրն եւ Զմռսաբերն, ունի եւ զԱւազուտն եւ զԱնանձրեւ երկիրն:*

45 [15]*Ը. Աշխարհ Լիբիա[յ] Ներքսագոյն Եթէովպիա է, որ սկսանի յարեւմտականէ յԱնծանաւթ յերկրէ, յերի՛ կալո[վ][16] [Ովկիանոսի եւ][17] ″Ենտոս[18] Լիբիո[յ] եւ Եգ[իպ]տոս[19] Եթէովպիա[յ]. եւ ըստ հարաւո[յ] սահմանի Անծանաւթ երկրաւ:* 46 *Առ որով բնակեն Երէկորնական[20] եթէ Եթէովպացիք, եւ ի հարաւո[յ] կողմանէ, [յԱյրեալ գաւառոյն][21]՝ Մերկ Վիշապամարդք, եւ ըստ հիւսիսո[յ], [առ Ովկիանոսիւ][22]՝ Զկնակեր Եթէովպացիք, յորում՝ [կենդանի ինչ՝ սուբոս[23] անուն, ոչխարանման, երկակենցաղ եւ ձկնակեր, առ որով՝ Աթակեանք[24] Եթէովպացիք, յորում][25]՝ առիւծաշուն գազանն:* 47 *Եւ ի [Հիւսիսոյ][26] կողմանէ նոցա՝ Փրփրեղջիւր Եթէո[վպացի]ք[27], յորում կենդան*[16ա]*ի ինչ՝ նման անլթոյ, մարդամարտ եւ անուշահոտ. [առ որով՝ Դեռբիկէ[28] եւ Դեռմոնայք[29] ազգք][30], յորում քաղ[31] ծառասէր եւ մարդամարտ, եւ ընձուղտք[32]:* 48 *Եւ [որոց ի Հարաւոյ մինչեւ ցՆիղոս աշխարհ մի է Ե-*

1 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* **Աս**տապուս

2 *VS* անգանի *փխ* անկանի *(վեր., հմմտ. Ե.58, 307)*

3 *V* կղզոյն *փխ* կղզւոյն *(վեր. Սուքր-նի՝ ըստ այլոց)*

4 *V* ը̅

5 *V* գ̅, *S* երեք *փխ* երիս *(վեր.)*

6 *VS* փեղք *փխ* փե[ւ]ղք *(վեր.՝ ըստ նախորդի՝ նախ. Դ.34՝* «զփիւղ». *հմմտ. նաեւ Ե.324՝* «փիղաց»*)*

7 *VS* զՏռովբ *փխ* զՏռով[գլոդիտիկ]է *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի DPv-ի (A-ում՝* զՏրոգլոդիպայիկոն *է, E-ում՝* Տոլոդիտիկի*). վերջին տառի համար տե՛ս ուշ երկաթագիր* **Է** → **Բ***)*

8 *V* լ̅գ̅

9 *V* տեղո *փխ* տեղւոյ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

10 *S* Թեմնացւոց *փխ* Թէմնաց[ւ]ոց *(V)*

բ **Յոբ, Զ 19**

11 *Սուքրեանն իր մեծատառի համար ծնթ-ագրել է՝* «Թերեւս ընթեռնլի, եւ ի միջին՝ Եթէովպացիք»*)*

12 *V* յԱրաբացոց *փխ* յԱրաբացւոց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

13 *V* ի̅է̅

14 *VS* զխնգաբեր *փխ* զխնկաբեր *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.20, 40, 58, 177, 312)*

15 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է ենթավերնագիր.* «Յաղագս Ներքսագոյն Եթէովպիոյ»

16 *V* յերին կալո *փխ* յերի կալով *(վեր. Սուքրեանի)*

17 *VS չիք* Ովկիանոսի եւ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. AE-ում* Ովկիանու *է)*

18 *V* սինդոս, *S* Ինդոս *փխ* Ենտոս *(վեր.՝ ըստ նախ. Դ.28, 31-ի. տե՛ս ուշ երկաթագիր* **Ե** → **Ի** *եւ բարբառային* **Տ** → **Դ***)*

19 *V* Եգտ՞ս *[կրկնաբութերով]*, *S* Ենտոս *փխ* Եգ[իպ]տոս *(վեր., հմմտ. նախ. Դ.37)*

20 *S* Երեկորնական *փխ* Երէկորնական *(V. յաջորդ բառի՝ կրկնուած* Եթէ *սկզբնամասը պարզ շփոթ է՝ տողավերջից տողասկիզբ անցման տեղում)*

21 *VS չիք* յԱյրեալ գաւառոյն *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. DPv-ում* Այրեալ *է)*

22 *VS չիք* առ Ովկիանոսիւ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի)*

23 *AE* տոբոս *փխ* սուբոս *(DPv. տե՛ս բոլոր.* **սու** → **տո***)*

24 *AE* Սթակեանք *փխ* Աթակեանք *(DPv. տե՛ս բոլորագիր* **ա** → **ս***)*

25 *VS չիք* է կենդանի ... յորում *(3 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս* **յորում** ... **յորում***)*

26 *VS չիք* հիւսիսոյ *(վեր. Երեմ-ի՝ ըստ համառօտի)*

27 *V* եթէոր *փխ* Եթէո[վպացի]ք *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. տե՛ս բոլորագիր* **ք** → **ր***)*

28 *AE* Դեռբեկէ *փխ* Դեռբիկէ *(Pv)*

29 *v* Դեռբոն, *v_{m}* Դերմունայք *փխ* Դեռմոնայք *(AEP)*

30 *VSD չիք* առ որով ... ազգք *(1 տող) (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի AEPv-ի)*

31 *V* քալ *փխ* քաղ *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի եւ հետագայի. հմմտ. նախ. Ե.121)*

32 *VS* ընծուղտք *փխ* ընձուղտք *(վեր.՝ ըստ Ե.297)*